ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ԲԱՐԵՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, հաշվի առնելով՝

իշխանության ձևավորման գործընթացում անհրաժեշտ ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների կազմակերպման և անցկացման հույժ անհրաժշտությունն ու կարևորությունը,

ընտրական պրոցեսի նկատմամբ տևական ժամանակ հանրային վստահության բավարար մակարդակի բացակայությունը,

ինչպես նաև ժողովրդավարական պետություն կառուցելու մասին Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները

և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի 60-րդ հոդվածներով, Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հինգերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի ընթացքում բարեփոխել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հարյուր տոկոս համամասնական ընտրակարգի սահմանում, ընտրական հանձնաժողովների ձևավորման նոր կարգի սահմանում, քվեարկության արդյունքների հաշվառման համակարգի կատարելագործում և այլն):
2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ Ազգային ժողովի խմբակցություններից ձևավորել համապատասխան աշխատանքային խումբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում բարեփոխումներ նախապատրաստելու և Ազգային ժողովին ներկայացնելու համար:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը բարեփոխելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի որոշման նախագծի ընդունման

Հայաստանի ընտրական օրենսդրության խնդիրների վերաբերյալ առկա են բազմաթիվ հարցադրումներ, որոնք իրենց արտացոլում են ստացել ԵԽԽՎ բանաձևերում, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումներում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մարտի 1-2-ի դեպքերն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում, Հայաստանի Հանրապետության քաղաքական կազմակերպությունների հրապարակած քաղաքական դիրքորոշումներում:

Առկա բազմաբնույթ խնդիրներից ներկայումս առավել առարկայական են.

1. ՀՀ քաղաքական համակարգում կուսակցությունների դերի ոչ բավարար մակարդակը,
2. ընտրական հանձնաժողովների ձևավորման, գործունեության և պատասխանատվության անհամապատասխանությունը արդար ընտրություններ անցկացնելու սկզբունքին,
3. Բազմակի և վերահսկելի (այսպես կոչված «հեծանվային» և «կարուսելային») քվեարկությունների արատավոր պրակտիկայի առկայությունը,
4. Քվեարկության արդյունքների հաշվառման և բողոքարկման անկատար համակարգը,
5. Նախընտրական հավասար քարոզչության ապահովման մեխանիզմի անկատարությունը,
6. Ընրակաշառքների և ընտրախախտման այլ դեպքերի բացահայտման և կանխարգելման գործում իրավապահ մարմինների լիազորությունների և պատասխանատվության անարդյունավետ համակարգը,
7. Նախընտրական քարոզչության համար ծախսված գումարների իրական վերահսկողության մեխանիզմի անկատարությունը,
8. Թաքնված ընտրակաշառքների բացառման մեխանիզմների բացակայությունը,
9. Վարչական ռեսուրսի կիրառումը բացառող մեխանիզմների բացակայությունը,
10. Քաղաքական համակարգում կանանց ներգրավման անբավարար մակարդակը,

Այս խնդիրները լուծելու համար առաջարկում ենք՝

1. ՀՀ Աժ 100 տոկոս համամասնական ընտրակարգի սահմանում:
2. Ընտրական հանձնաժողովների ձևավորման նոր կարգի սահմանում:
3. Վերահսկելի, բազմակի քվեարկությունների և լցոնումների բացառում:
4. Քվեարկության արդյունքների հաշվառման համակարգի կատարելագործում
5. Նախընտրական քարոզչության սահմանման, հասանելիության և հավասարության ապահովում:
6. նտրական գործընթացների կոնկրետ ժամկետում, օրինակ ընտրություններին նախորդող 3 օրերին, ընտրության օրը և մինչև ընտրության նախնական արդյունքների հրապարակման պահը, ընտրախախտումները, ընտրակաշառքները կանխարգելելու և պատժելու գործում ոստիկանության հատուկ լիազորությունների, պատասխանատվության և ընթացակարգերի առավել պարզեցում, հստակեցում և սահմանում:
7. Ուրիշի փոխարեն քվեարկելու հիմքով դատական կարգով վիճարկման դեպքում նախատեսել դատարանի կողմից քվեարկությանը մասնակցած անձանց անձնագրային տվյալների ստուգման պարտավորություն:
8. Նախընտրական քարոզչության համար ծախսված ներդրումների իրական վերահսկողության մեխանիզմի կիրառում:
9. Թաքնված ընտրակաշառքների բացառման մեխանիզմների կիրառում:
10. Վարչական ռեսուրսի օգտագործման հնարավորության բացառում:
11. Քաղաքական համակարգում կանանց ներգրավվածության մեծացում: